

կը՝ ազգային լուսաւորութեան այն անպին և պատուական շենքի վերայի, որ նա արդէն ստեղծել է։

«Համարձակ ծանուցանում եմ, թէ անդընդպացական կրթութեան դործում տէրութեան մասնակցութիւնը սահմանափակ պիտի լինի; Բայց և այս կուելացնեմ, որ այդպիսի սահմանափակ օգնութիւնը նա պարտաւոր է տալ անմիջապէս։ Այս համոզմամբ ես արդէն զիմեցի եւելմասկան յանձնախմբին, խնդրի լով որ վարկ սահմանուի ի նպաստ անդրդպրոցական կրթութեան, և արդէն նորա յօժարութիւնը ստացայ այդ մասին։»

Մ. Մ.

## ՊԱՏԿԵՐՆԵՐ ԸՆԹԱՎԻ ԳԻՒՂԱԿԱՆ ԿԵՐՆԵՐԻՑ։

Բ.

### ՔԵՐԴԱԿԻ.

Ապանձ կիրակնօրն էր, քնէս զարթնայ որ թնդիրը վառել իջել է. մենծ ապլաս հաց է թիմ, պիցի անսա գրտնդմ է, հարս ապլաս գունդ է տալմ ու հացերը փոմ, Մամն չանդները լուացէ, թնդիր շրս կողմը շարել ու թնդրէն կրակ հանէ եղհալիչով եղ է հալմ, Աղջիկներու գաղարումն է կըսես թէ կտրել էր՝ պալազօտի կերած ձկի պէս պահուցուայ շորերն ու կարմիր ողիցները հագել ճաթթ-վաթ էնելով թէզ թէզ գուսւ էին ելնմ, նես գալմ։

— Մամի ջան, գէ թէզ էրէք, հմի Մկոյենց շէլիկը կերթայ, ըսաւ Շուշանը։

— Ահան ես պրծայ, եղն հալաւ, Մագթաղ ջան, ոդի հացը զրէք, գդները սարբէք, ես էլ էս է խաշիլը լցնմ եմ, ըսաւ մամս ու սկսաւ խաշիլը գութնի պղնձէն լցնել չանդները։

— Մագթաղը սալէն զլոխ հաց գարսեց, գդներն էլ գդնոցէն բերաւ գրտեց, սարբեց ու առաւ դնաց ոդէն, Մնացած աղջիկներն էլ մամիս լցած չանդներէն՝ ամէն մէկը մի մի հատ խաշլի եա թանապի շանալ դըրկըւորան ու դնացին։

— Զարթար ջան, հացը թիմիր պրծար, մեր էս Ճամփու բաղաջներն էլ զարկ կողմը. հմի ոդից հացը յեա կուգայ, մէկը էլ հաց ուտենք ու Ճամփայ ընկնիք, ըսաւ մամն ու ողուշաղի հմար էլ հացի թագարուկ տեսաւ։

Եր որ սուրփէն դրին, մամն ու մենծ հարսները մէկ նստան, աղջիկներն ու պղտի հարսներն

էլ մէկ, հմա մէրս հեռու կայնաւ, չմօտեցաւ սուրփին։

— Ո՞չ, հարս, գու ծում ու պաս պտի երթաս, համ, սուրփին չես մօտենմ։ Թաժա սուրբը մուրազդ տայ, Դէ, որ ըգման է, Յակոյիս շորերը հացցու, հաց տուր ուտէ. Էն էլ խօ ծում գալու չէ, մատղաշ է, չի դիմանայ։

Նոր մէրս մօտեցաւ ընձի, վերնաշապիկս ու չարող գուլպէս հազցրաւ, ինչարի ընդոնք էլ կերան, պրծան, սարբւորակը ու ճամփայ ընկանք դիպա թաժա սուրբը. Հլա գեղէն գուսւ չէինք ելել, որ մեզի հետ խառնուան Մկոյենց, Մլքոյենց ու Պիպինենց չէլլիկը, Խառնուելուն պէս աղջիկները մեզէն ջոկնուան ու ձէ-ձէնի տուած խաղ ըսելով արտերու միջէն սինձ քաղելով յառաջ գնացին։

— Ո՞չ, կրակ ուտէք, աղջիկներ, հլա ինչ մեզէն թէզմ ջոկնուան, ըսաւ Մլքոյենց Մարթան։

— Ըրաւ, չիտես որ իծուն էծը լաւ է քանց մի սիւրի օչխար, վրայ բերաւ Պիպինենց Գարանը. Ե՞՞ հմի, ջոկնուան, ջոկնուան, խօ ջրերը չպայնան. Ժնէք էլ իրար հետ խօրաթայ էնելով եաւաշ եաւաշ կերթանք։

— Հարսներ, աղջիկներուն թամբայ էնէիք սինձ չքաղեն, մեզդ է՝ ուխտ էրթլուս գետնէն բան չեն վերցնէ, սուրբը մուրազդ չի տայ. քաղմ էն, էն կողմէն յետ գալուս թող քաղեն, խրատ տուաւ Մլքոյենց նշխուն անան։

— Քա քաւորկին Մարօս, աղաք էն կնիկը սաղէ, հարցրաւ Գարանը մամիս։

— Ո՞ր կնիկը.

— Էն, որ էրազ էր էկել թաժա սուրբը։

— Քա աղջի, խօ էրազ չէ էկել, վրայ պրծաւ Մլքոյենց Հոռոմը, զօր ցօրեկով տեսելու աշքին էրեւացել է, ինչդ որ չլմանցնենք՝ ես ու գու իրար տեսնմ ենք։

— Ո՞ւ էրանէկ էդ կնիկան, ինչքան արդար է, որ սրբերը օր ցօրեկով աշքին էրեւմ են, թէ սազ է, էրնէկ իրան, թէ մեռած է, զաթի հոգին լսի փայ է։

— Քա ջան էղիկ ի՞նչ էր եղել։

— Կնքը չիտեմ եաղուրու թէ ասորու ժողովք էնող աղքատ կնիկ է, սկսաւ գաւուագիտուն նախշուն անան, էն վերի գեղանէն մէ պիջի աղջկամ ձեռ բռնած գալուս, էդ ձորերը թիփին կառնի իրան...։

— Քա ձմեռ զաղմ է էղել։

— Ըրաւ ձմեռ չէք, որ էկան ըսին թէ թաժա սուրբ է ելել. Արդդ թիփին որ սկսէ կը կատղած փշել ու Ճամփէն մոլորցնել, էդ խեղճ կնիկ արմատը ընկնի կը ծնկներու վրայ, առ Աստուած կաղաղակէ, կուլայ ու սրբերուն հաւարի կկանչէ, Մէմ էլ կտեսնի մէ զո ձիաւորմ այ, բինիշը վրէն, մրզազդ ձեռը, ձին խաղցներով գալմ է։

— Աւհ, են սուրբ զօրութանը մեռնիմ, ամեն մի նեղը լնկած հայ—քրիստոնէի ձենին ու հաւարին հասնի:

— Կուգայ, եդ կնկան էլ աղջկան էլ քաշէ կը թարքն ու բերէ իրան գերեզմնի ելած տեղը կիցեցնէ, մրզալը գետնին զարկէ ու կըսէ. էսսիկ իմ տեղու է, կերթաս գեղացոց կըսես գան ընձի ըստից հանեն, Հերիք մէ հերիք ընձի ըստեղ թողնին ու նախիրը բերեն վրես պարկեցնեն, չղնամիշ էնեն, կնիկն էլ լայ, կընկի ոտներն ու կըսէ. առաջա ջան, ընձի վէվ է ճանչնմ, վէվ կաւատայ որ, ըսի թէ չէ պտի վրես տոսղայ էնեն, ծրծաղննա: Սուրբը կըսէ—գուր գնան, ըսաւ քու ինչ բանդ է, էրին—էրին, չերին՝ ես ընդոնց հախեցն կուգամ: Էման մէ հրացքմ ցուց տամ որ, յաւիտեան չը մոռնան: Անիկն է կուգայ գեղացոց կըսէ: Մէ քանիզ չեն հաւատայ, խելորի տեղ կը գնեն, վրէն կը ծրծաղին, հման մէ քանի ջահէլ ջուհու տղայ բահ ու թի կառնին կերթան փորեն կը:

Փորելու յառաջ պատի հիմը գտնին կը, ընտից փորեն, փորեն դուս կերերեն գերեզմանաքարերը: Մէմ էլ որ բահը զարկեն կը, իրա մարմինը բացուի կը: Ըսման չլմանցնենք, ինչդ որ իսանը, ձեռները գօշն իսաշած ու նստած է, Արքի միսը քուլի մաշէ գնացել էր, մէ ոսկորներն էր մնացել. Էման որ, ձեռ որ տայիր, իրարից այրմիշ կեղնէր:

— Հա, ըրա, մեր տղէքն էլ եդ տեսակ գըշել տեսել էին:

— Մէ վախթմ ըդման պահեցին, Յետև տեսան որ շատ ընտաւոր գալմ, էրթմ, համրուրմ է ու ոսկորները իրարից այրմիշ է էղնմ: արդի տեղն ու կըլը վրէն ծածկեցին ու գէմը իսաչքար դրին:

Եդ տեսակ խօրաթայ, էնելով, գնացինը հասկը թաժա սրբի սրբի սարը: Զինկիլ, զոաջ քարերու մէջէն հետը հետը սկսանք վերև բանձրնալ:

— Աւհ աման, ես ինչդ չինկիլ սուր սուր քար են, բորիկ սոքերուս կաշին հանեց տրտնջաւ Պիպինենց Հեկոն:

— Ազջէ, սրբի դուռն էրթլուս էլ տրտունջ ես էսմ ու գանցատուում: Ամեն որ բուդ մարմինդ բդելու հմար կվազես ես կողմ, կվազես են կողմ: մի օրմ էլ Տոգուդ հմար որ շարչարուիս, ինչ կեղնի իոս, ազառեց Հեկոյին Հոռոում անան:

— Քա, Հոռոում անա ջան, իոս բան չըսի ըուր. քարերը շատ սուր սուր են, ոտքերս ծակծը լում են, եդ եմ ըսմ:

— Հա, քարերը շատ սուր սուր են, ըստեղ որ չես կընմ դիմանայ, ես լէն ու բոլ ճամփիէն էրթայ, ըրա Արդէնէր էրթլուս էն նեղ նեղ ճամփիով ինչդ պտի էրթաս:

— Քա ջան, են տարին ըսինք Արդէնէր

էրթանք, էրթանք ու չկրցանք էրթայ, ըսաւ Մարթան, Շատ փափակ եմ Արդէնէնէր էրթլու: աւէ էն տարւանէն ուխտացել եմ, հմա սամթը չի գալըմ: Մեռնիմ իրա սուրբ զօրութենին, յուշանուլ կայ, ուրանալ չկայ: Դու զնացել ես, տեղեակ ես ճամփիքուն, Հալ թարիփ էրա:

— Խնչ թարիփ էնեմ որ, մարդ պտի էրթայ, իրա բաց աչքով տեսնի, որ նոր էղնի: Արդէնէնէրու ճամփիէն խօ սման էն ու բոլ չէ: Էման նեղ է որ, թաք թաք իրար յետեւ պտի էրթցուի, շատ շատ որ էղնի շորերդ բառնալու հմար մէ էշ պտի վերցնես հետդ եա ձի, թէ չէ սել, բան չի էրթցուի: մէ եաեանուորի ճամփայ է: Հետուէն տեսնմ ես ըստաւորները օնչըրի սիրու պէս իրար յետեւ շարուել, երկնցել, էրթմ են:

Իրա օժևանը չինկիլ կապանի մէջ է, ամեն մարդ չի կրնայ ելնի, մենակ արժանաւորներն են ելնմ իրա ճգնած տեղը համբուրում:

— Դու կրցա՞ր ելնի:

— Քա որտից կրցայ, փողը իմ զլխուս, են արդարութենը ունիմ որ, էման տեղեր ելնիմ: ըսաւ նոռոմ անան խորունկէն ախ քաշելով: Որն որ անարժան է, տեսնմ ես՝ շարչարուում: ելնում է ու կիսաճամփայ՝ թրըփ ընկնմ է թեաբբեար ցած: Հմա վերն էլ որ արդար է, արժանաւոր է, առանց չարչարուելու զօլայ ելնմ էլ ճգնած տեղը համբուրում: ման գալմ, զրէն էլ իմում ու ցած է իջնմ:

— Քա ջան, եդ ջուրը ինչդ է որ:

— Ճգնելու տեղը, ժեռ քարի փոսի մէջ է ու ոնչ կաւելանայ ոնչ կպակասի: ինչքան կուզես, իմէ, թափէ, քուդէքով վերու վրէցէն եա թէ չէ ամիսներով, տարեկով թող տեղն ու տեղը, հմա էնիկ էլի էն, էլի էն, ոնչ կաւելանայ, ոնչ կպակասի: Ըսմ են ըդեղ էնքան է Արդէնէնէրը ճգնել, աղօմելու ու ծունդր դրել, որ ծնկներու ու ձեռներու տեղը փոս է ընկնել: Մէ օրմ էլ իրա ճգնարանէն իջէ գնացել է մէջէն ման զալու: Ման գալուց գառնալուս տեսել է, որ մէ ծերի, գլգոլած հալիւրմ ճամփու գրէն նստած է: Մօսեցէ բարեւ է տուեւ ու ըսէ, Արար ջան, ընչես ըստեղ նստէ, քելէ էլթանք իմ օժևանս, քիչմ հանգստացի: Հմա տեսել է որ հալիւրը տեղէն չի կընմ ժաժ գայ, էրել է թէ շալիէ, հմա ձեռն երկնցներու պէս, հալիւրը սրըփացել է ու ըսել. ո՛ւհի, աման, ձեռ մի տայ ընձի, որ վրէս սաղ տեղ ըը կայ, քուլի եարայ էս: Արդէնէնէրը հարցրել է: Արար ջան ըրա ինչդ էնեմ: որ քեզի տանիմ օժևանս: Հալիւրը թէ էս ուռերէն քթոցմ գործէ, ընձի գիր քթոցի մէջն ու տար: Արդի ըդեղ Արդէնէնէրը ուռ քաղէ, քթոց գործէ, հալիւրին մէջը գրէ, շալիէ ու ճամփայ է ընկէ դիպայ իրան

օմեանը, ճամփու վրայ մէ քարմ է ըռաստ էկէ, հաղիւորը թէ ողդի, ընձի վեր գիր էս քարի վրայ, մէ քիշմ հանգստանամ։ Աարդէհերն որ քթոցը վէր է գրէ քարին, քթոցի քարին էկած տեղը, երկու մատ քարը նես է իջէ, հիմի որ ըխտաւորն երթմ է, եղ քարը ճամփու վրայէ ու մալում է քթոցի գրած տեղը, Հալիւորն որ մէ քիշը գինչացել է՝ ըսել է, մրդի, մէ քիմս որրէ, Աարդէհերը երել է թէ ձեռով սրբէ, հալիւորը սվամպել ու ըսել է. ունչ, աման, ձեռով մի սրբրէ, երարայ էս, երել է թէ մարմով սրբէ, էլի չի թողէ, արդզ էս անգամ Աարդէհերը քիմը առել է բերանը, ծծէ ու տարէ էն կողմ թափէ։

Հալիւորը ըսել է՝ «Ճարաւա պապակայ, որդի՝ մէ ջուրմ տուր ընձի», Աարդէհերը թէ՝ «Արար ջան, ըստել չօլ, ամայի տեղ է, ջոր չկայ, երթանք օմեանս ջուր կուտամ։ Հալիւորը թէ՝ «որդի, էն կողմն որ բէնէդ թափիցիր, հաւ գառի էն կողմն աշէ»։ Աարդէհերը դառել է որ, ի՞նչ—էն տեղն որ թքել է, գետինը պատել, ու կանանչ ու կորմիր աղբիւորը ջուռ է քցմ, կը ունցել է թէ բռով ջուր բերէ, հալիւորին խմցնէ, ինչարի շիտկուել է որ՝ հալիւորը գրել ես տեղն իսաւ կայ, մէ քթոցը մնում է ու հալիւորը չկայ. Արդի ճաներուն է զարկէ, զինուն է զարկէ, լացէ, մաղկտէ ու ըսէ. Աայ, արար ջան, քեզի ի՞նչ է զաւ, աջար զէլ տարաւ, գաղան տարաւ, էդ լացն մէմ էլ ձէնմ է անկազը ընկել, որ ըսմ է. Աարդէհեր, Աարդէհեր, իմ գուռս էկողին, ընձի դիմաւորդին, մէ պորտին թողութեն, քու գուռդ էկողին, քեզի դիմաւորդին, օմար պորտին թութեն։

— Ունչ, էն սուրը զօրութենին մեռնիմ, աշջար պտի էղնի որ, երթանք համրութենք, աջար արժանի պտի էղնինք որ, ըսաւ լալակիննել էն Մարթան։

Էման էինք տարուել նոռոմ անայի էս պատմութենով որ, չեխնք իմացել թէ ինչզ ենք ելել թմրի զլօնին ու ընտիր զիմուրել ցած, դիպա թաժաւ սրբի ձորը, Զորէն մէ քիչ էն կողմն թմրի վրայ, Էնքան ըստաւոր եր թափել որ, մէ կալաչափ տեղ ասեղ քցելու չեր էղնի. սաղ մատուռը ծածկուած էր ալ ու խաշխաշ հագնուած շելիկով, իջանք ձորը, առուն անցանք ու հետը հետը բանձրցանք դիպա մատուռը։

Առուի բէնի հետ, կանանչ խոսերու վրայ բազմէ նստել էին ըխտաւորներն ու բաց երել իրանց ըխտի բօխչելը՝ հաց էին ուտմ. Մէկւա ծախողները փաել էին գետնի վրայ մէ մէջօկի եա քեամանի կտոր ու վրէն թագեարայ էին երել արևածաղկը, չամիչը, հոռոմ—կորենին ու ֆնդըլը. Աչքս ամեն մէ մէյսի առնելու լաւ արկէքս սրմէի, բէնին թուքը կուլ տալմ, հմա ամնցմ իէ

մամին ըսելու. Մամս էլ որ, կըսեն թէ եղ սհաթին մահան էր երել ընձի, գունչը տնկել, ընկել էր մեր շելիկի առաջն ու առանց մէյւերու վրայ աշելու յառաջ էր երթմ, Սըխ թոփ էզած շելիկի միջէն ճամփէրս էս կողմ էն կողմ ծռման եղով համանք մատուռը. Սղմնտուելով ցածիկի դռնէն նետէն նես մտանք որ, ըխտաւորներէն որը երեսի վրայ ընկեած լալմ ու երեսը գետներուն է քառում. որը կայնած, քանի ուժն է բռունց բներով դօշնին զարկմ ու մաղկը արմ է, որն էլ ենթան է լացել որ, թուլացած ծընկներու վրայ ընկել ու մնացել է. Մարդմ էլ գերեզմաքարի առաջ թուլ վէր է ընկել, գլուխ դրել է գերեզմանի տակն ու սուս կեցել.

Երինք թէ յառաջ երթմանք չորս կողմէն մեշղի բրդեցին ու ըսին. «ուը էր երթմ, գերեզմանի առաջ վէր ընկածը քետպակ էս, եդ անունն որ իմացանք, ասրսափելով յետ քաշուանք ու սկսինք ծռւնդր գնելի երեսներու խաչ հանել, Մէ քիչ կայնէ, չէինք կայնէ, մէմ էլ տեսնինք քետպակը դըլուր փիրեւ վերդիրաւ ու ծուաց. «յետ զնացէք, ճամփաւ բաց երէք, աղէս էկաւ, Շելիկի իրար սղմատելով մէ ողի արանքի չափ դռնէն ինչարի գերեզմաքարը առաջ բաց երաւ։

«ունչ, էկար աղա ջան, բարձր բօյիդ մեռնիմ, կեռ կեռ ունքերուդ մեռնիմ, թուլի թուլի աչքերուդ մեռնիմ, այ բինիշիդ մեռնիմ, երկան մրզղիդ մեռնիմ, արի տեսնինք ում մուրազը պտի տաս, արի, աղա պապի ջան ըսաւ քետպակն ու սարսափելով յետ քաշուաւ, գերեզմանի էս կողմը մէ քիչ կայնաւ ու ծուաց. «Զանանենց թուռուն, ընչես էդ քեօչեն կայնել, յառաջ արի, աղէս քու մուրազգդ տուաւ։

Շելիկի միջէն կուճ ու ձիդ էնելով, լալով յառաջ էկաւ մէ ալ մահուելէ բինիշը կերկի ընկաւ գերեզմանի առաջն ու սկսաւ լալով երեսները գետնին քանել։

— Էլ մի լայ, հերիք լաս աղէս քու մուրազգդ տուաւ, Զանուզած ճերմակ գառիմ շինքը ալ բաղդադիմ կրկապես ու կրերես աղիս գուռը մատաղ, Դէ, գնա՞ս, մուրազգդ առար։

Կնիկը համրուրեց գերեզմանն ու յետ էկաւ։

— Թորոյենց Սառաւ, աղէս քու մուրազգդ չի տալմ, Դուք խոստացել էք, որ անձին էրինջմա բուկը շալկունի կապած թերէք աղիս գուռը, հմա ձեր խոստումը չէք կատարել, ըգուր հմար կտան ջուիս, ինչարի կատարէր, Յեր խոստումը։

Էդ ըսաւ քետպակն ու կայնաւ գողցրաւ, գողցրաւ, իրիուրն ելաւ բերանը փաթթեց ու կրունկի վրայ շըլփ վէր ընկաւ, Մէկնելի վէր ընկեած տեղը կեցաւ, ընդից վէր ելաւ ու սկսաւ զինուն, ճաներուն զարկել ու ըսել. «ունչ, աղա ջան, զնացիր, ման գալած ճամփէքուդ մեռնիմ,

ուներուդ տակը մատաղ էղնիմ՝ աղա ջան, քուլ-  
լլքին մուրազ տուիր, ընձի թողիր, աղա ջան»:

Եղ վաղթին սաղ շելիկը ջուրն էր մաղուել  
Շատերն էնքան էին չոբած տեղը լացել ու ճռե-  
րուն ծեծել որ, էլ չեին կրնմ տեղերէն վեր կե-  
նայ:

Քեագակն որ դադարաւ ծեծկուելէն ու թու-  
լացած էլի վեր ընկաւ գերեղմնի առաջը, շելիկը  
հետը հետը վախվելէն մօտեցաւ գերեղմնին,  
համրութեց ու ցրուաւ Մամն էլ ուլլ կորցրած ի-  
ծու պէս արտօնւթը աշքերուն չորցած խելառ մէ-  
լառ էս կողմ, էն կողմ աշեց ու ճռւաց մօրս-  
աց հարս, ուր ա Յակոն։ Երար ընձի մօրս քովր  
տեսաւ, սիրտը կայնաւ, բռնեց թեւս ու բառ-  
ուի, քելէք, քելէք երթանք մենք էլ համրու-  
թներ ու յառաջ տարաւ մեզի դիպա գերեղմնին,  
Գերեղմանն որ համրութնիք, գերգմնաքարի տակը  
փոս ընկած տեղէն մէ քիչ էլ ջուհար հող լցաւ  
մարմի ծօթը, հանգուստեց ու գնացինք էն մէկէլ  
կողքի գերեղմները համրութելու, էդ գերեղմնեն-  
ներու վրայ էնքան շալկովնի, բաղդասի ու ձեր-  
մակ փաթուսղէ չորս բոլորը օյեա գործած շուշ-  
րէք էր քցած որ, քարերը մէջը չեին էրևում։  
Ըուշը քրու վրայէլ էնքան ասեղ էր զարկած որ,  
մէ բօշէմ որ էդ ասեղները սաղ ամիսմ ծախէր  
գեղանք, չէր կրնայ պարպէ, երար մօտեցանք համ-  
րութելու, ձեռս երկնցրի ասեղներէն մէկին, հմա-  
մամն յետ քաշեց ըսելով։ «Շի, զուրբանդ էղ-  
նիմ, էղիկ պապի ասեղներն են, ձեռ մի տայ։»

Համրութելէն յետեւ գուստ էկանք, Մատուռի  
դրան առաջն ու դունէն մէ քիչ էն կողմ թպլլու  
ու մարկինու ծառներ կային։ Ծառներու վրայ  
էնքան մանրը մոնդր շոր էին փաթթել որ, թէ թոփ  
էնէի մի ասղ տարիմ մեր գեղի աղջներու պուր-  
պկներուն հերիք էր. հմա վախեցայ մամա էլի  
մթողնի ըսելով թէ պապի շորերն են։

Մատուռէն գուզ գնացինք առուի դրալը,  
ըսեղ մեր շելիկը երեսները լուացին ու րօշէքը  
բացին, նստանք հաց ուտելու, էնքան բաղաջ,  
ծուածեղ, հուսակ ու հաւկիթ թափեցին լոշ հա-  
ցերու հետ փռոցի վրայ որ, մենք չէ, մեզի շափ  
երկուս էլ շելիկ էղնէր, չէր կրնայ ուտէ պարպէ,  
շացի նստելուն պէս, մամն 5—6 հատ բաղջի հետ  
մէ խելի հուսակ ու հաւկիթ փաթթեց լոշերու  
մէջը, վերցրաւ։

— Մամի ջան, էդ ընչու հմար վերցրիր, հար-  
ցըի ես։

— Էս էլ տանինք ձեղի հմար մէյւա առնինք,  
բառնուկու

Մէյւի անունն իմանալուն պէս իշտայս կապ-  
ուաւ, էլ չկրցայ հաց ուտէ։

— Յակօ ջան հաց կեր, է, մամիս հետ  
զոսեցին չորս կողմէն։

— Չեմ ուտէ, մամի ջան, էման կուշտ եմ  
որ, կրսես թէ մէ սաղ գառմ եմ կերէ։

— Մեռնիմ էն տուրբ զօրութեանը, պապը  
Յակօյիս մուրազը տոււաւ էլ Յակօս հաց կուտէ,  
ըսաւ նշխուն անան։

Հացն ուտելէն յետեւ ես ու մամն գնացինը  
մէյւա առնելու, շելիկին էլ գնաց դիպա մատուռը,  
որ մէմ էլ համրութեն ու ձամբայ ընկնինք։

Մամն մօտեցաւ մէ մէյւա ծախողի, հացիրը  
տուաւ ընդուր ու ըսաւ. Աղբէր ջան էս բաղաջ-  
ներն հացերն ու միջի հուսակը, հաւկիթները քեզի  
մատղներուն մէ քիչ մէյւա տուր։

Էն մարդն էլ վերացրաւ կշեռքի մէ թաթի  
մէջ մեր ոդի օջի մոխրահան թիակի լման մէ  
թեանաքէ թիակով արեածաղիկ ու չամիչ լցաւ,  
կշոեց ու գարտկեց մամիս փռած աղլուղի մէջը,  
Մամն էլ աղլուղի պոչերը վրայ բերաւ, կապուեց,  
տուաւ իմ ձեռս ու մէկէլ ձեռնէս էլ բռնեց՝ շիտ-  
կուաւ դիպա մատուռը, նես մտանք մատուռն որ,  
քեադակը չկանէ, ընտաւորն էլ նօսրցել է. Մէ մեր  
շելիկն է, համրուրում է գերեղմները, մէ մէլ  
մէ քանի ջահել ջուհուլ տղէք հետը համրուրում  
են, հետը քար են կացնում գերեղմնին որ տեսնին  
թէ որի մուրազը պտի տոյց թաժա սուրբը. Աերցը-  
նում էին ամեն մէկը մէ մէ պղտի քար ու կողքի  
կացնում գերեղմանաքարին։

Թէ իրանց քարը գերեղմնին հետ կպնում  
մնում էր, զաթի էն է թաժա սուրբը կացը-  
նողի մուրազը տուած էր էղնմ: Թէ չէ՝ քարը վեր  
էր ընկնում իմանում էին: որ մուրազները չեն ա-  
ռել։

Համրութելէն յետեւ ձամփայ ընկանք դիպա  
գեղ։

Եր. Մովկիսեան.

## ՄԱՆՐԱԼՈՒՐԻ ԲՈՒԺԱԿԱՆ ՏԱՐԱՎԱՐԱՐԱ

ԱԿՄՈՒԱ ՁԱՇԱԾՈՅ ԳՈՐԾ. — Ռուսաց Ս. Մինօքի  
տեղեկութիւններից նրեւում է, որ ներկայումն Ռուսաստա-  
նում դոյլթիւն ունի 742 վանք, 12,940 վանականներով,  
որոնցից 15,050 կրօնաւոր եւ կոյս, 27,910 տիբացու: Մի-  
անձան մօնաստաններ թիւն է 507, միանձունք 15616,  
կուսանցններ 253, միանձունք 29,524:

Հակոբանի աս տեղեկութիւնները „Ուրազօննեւ“  
ամսագիրը նետեսաւ Խորհութեանն է անում. Խնթա-  
գութով որ իրաքանչըր կրօնաւոր առանց գտուարութեան  
կարող է ուսուցանն 10 մասուկի իրաքանչիր տարի  
Ռուսաստանում ուսանող մամկանց թիւը կամանար  
450000-ով, սթէ այդ ցառանուն սթէց հազար կրօնաւոր-  
ները իրանց ժամանակի մի մասը նուիրէին ուսա-  
ման տոյց կարող գրեւ սփորնցնելու աստուածանածոյ գործին: